# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03413ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐՄԻՆԵ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.03413հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0018-0009, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ ՎՁՄ Արենի համայնք, գ. Արենի 35 փ., N10) և հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 140.7քմ և օժանդակ շինությունը (ծածկ) ՝41քմ, ընդհանուր 181.7քմ մակերեսով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Արմինե Ռուբենի Աբովյանին:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Արմինե Աբովյանին վճարել 199 849 *ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների համար* և 416 728 ՀՀ դրամ 0.03413հա բնակավայրերի նշանակության հողամասի համար, ընդամենը՝ 616 577 ՀՀ դրամ,
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցապատող Արմինե Աբովյանը ունի 6 անչափահաս երեխա և ընտանիքը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում ազատել համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարներից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**